Սարգիս Հարությունյան

ՎԻՇԱՊԱՄԱՐՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ,,ՍԱՍՆԱ ԾՌԵՐՈՒՄ,,

1. Վիշապամարտի միֆոլոգեմը հայ առասպելաբանության հնագույն և կայուն բաղադրիչներից է, որի մասին նախնական գրավոր վկայությունները վերաբերում են V դ. ծայր առնող գրական սկզբնական հուշարձաններին, մյուս կողմից՝ այն կենդանի հարատևում է բանավոր ավանդության մեջ առ ի XX դ.:

2. Բնական է, որ այս վաղնջական և հարակա միֆոլոգեմը դրսևորումներ գտներ հայ վիպական ավանդության մեջ և, մանավանդ, ամենամեծ վեպում՝ ,, Սասնա ծռերում,,:

3. Վիշապամարտը ,, Սասնա ծռերում,, դրսևորվում է երկու եղանակով.

ա/ ուղղակի՝ առասպելաբանական նկարագրով, և բ/ անուղղակի՝ վիպական պատմական խավվորումներով:

Առաջին եղանակով այդ միֆոլոգեմը հանդես է գալիս Սասասարի և եղբոր/ երկվորյակների/ հետ կապված վիպական մի քանի դրվագներում, երկրորդ եղանակով՝ Դավթի և Մսրամելիքի մենամարտում:

4. Սասասարի վիշապամարտության դրվագներում մի կողմից երևան են գալիս հինարևելյան / շումերական/ Էտանա-միֆին աղերսվող առասպելաբանական ողջ համալիրի հետագա դրսևորումները, որ գտնում ենք հեքիաթների միջազգային սյուժեներում/ ATh. 537/, մյուս կողմից՝ հին հնդևրոպական ամբրոպային առասպելներում / Պղնձե քաղաքից Սասասարի հարսնառության մոտիվները/:

5. Դավթի և Մսրամելիքի հակամարտության, մենամարտի, Մսրամելիքի սպանության դրվագներում՝ մարդեղինացած և խիստ պատմականացած հերոսների արարքների ընդերքում ընկած է հին հնդևրոպական վիշապամարտի առասպելաբանական սյուժեն, հորինվածքի ու կառուցվածքի բնորոշ հատկանիշներով:

6. Թե երկվորյակ եղբայրների / Սասասարի և եղբոր/, թե Դավթի և Մսրամելիքի վիպական սյուժեներում գործում են ոչ թե պատահական կամ եկամուտ առասպելաբանական մոտիվներ, այլ երևան է գալիս առասպելաբանական մի հնագույն, զորեղ հիմք, միասնական համակարգ ու տրամաբանություն, որն արտահայտվում է հերոսների ջրային ծագման, ջրից զորանալու, ջրից ծի, զենք ու զրահ ձեռք բերելու, ջրի ակունը-

քին տուն ու քաղաք կառուցելու, ջրի մեջ սպանվելու, ինչպես նաև ջրային կամ ջրարգել վիշապների դեմ նրանց մաքառելու և հաղթելու առասպելաբանական իրակությունների մեջ:

Հասմիկ Իսրայելյան

ԵՐԿՎՈՐՅԱՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ,,ԹՈՒԽՄԱՆՈՒԿՆԵՐԻ,, ՓՈԽԱՌՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

1. Հայաստանի մ.թ.ա. II - I հազ. պատկանող մի խումբ ժայռապատկերների և Վրաստանից գտնված քրոնզե մի քանի գոտիների կոմպոզիցիաների քննարկումը բերում է այն հետևության, որ Հայկական լեռնաշխարհում քրոնզի դարում լայն տարածում է ունեցել երկվորյակ աստվածների պաշտամունքը: Այն զոյատևել է նաև Վանի թագավորության ժամանակաշրջանում և ներթափանցել հայ հեթանոսական միջավայրը, մարմնավորվելով ,, Թուխ Մանուկ,, անվանվող երկվորյակ կտրիճների կերպարում:

2. Երկպագվող թուխմանուկները կրում են երկվորյակ աստվածներին բնորոշ բոլոր հատկանիշները:

Մանուկներին տրված ,, թուխ,, ածականն ուղղակիորեն մատնանշում է նրանց կապը ջրի, անձրևի երևույթի հետ: Այդ առումով նրանք զուգահեռ են ,, Սասնա ծռերի,, երկվորյակ դյուցազուններ Սանասար-Բաղդասարին: Թուխ Մանուկին ևս վերագրվում են ջուր ստեղծելու կարողություններ: Հնդկական երկվորյակ աստվածներ Աշվինների նման նրանք էլ հանդես են գալիս իբրև առատություն ստեղծող, չքեր կանանց զավակ պարգևող զերբնական էակներ:

3. Թուխմանուկներին նվիրված միջնադարյան երգերում դիտվում է նաև նրանց եղանակ կարգավորելու կարողությունը և այդ առումով՝ Թուխ Մանուկի վիշապասպան էությունը, ինչպես Սանասար-Բաղդասարինը:

4. Մինչև մեր օրերը հարատևած շատ հուշարձաններին/խաչքարեր, մատուռներ և այլն/ տրված ,, Թուխ Մանուկ,, անունը, հավանաբար, ծագել է ի սկզբանե, երկվորյակ թուխմանուկներին վերագրվող զերեզմաններից, որոնք, իբրև կանոն, սարքվում էին ջրերի մոտ: Պետք է ենթադրել, որ դա արվում էր /ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները / ոչ միայն այդ զերեզմանները մշտապես խոնավ պահելու համար՝ անձրև ստանալու միտումով, այլև այն պատճառով, որ, ըստ հների պատկերացումների, երկվորյակների ոչ միայն ծնունդն էր կապված ջրի